

ԸՆԴՀԱՆՈՒՄ ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՍԲ. ՅԱՐՈՒԹԵԱՆ
ՏԱՃԱՐԻ ՄԷՋ

2008 թուականի նոյեմբեր 9-ին՝ կիրակի օրը, երբ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց միաբանության անդամները Սբ. Յարութեան Տաճարի մէջ կը տօնէին Գիտ խաչի տօնը, ընդհարում տեղի ունեցաւ հայ եւ յոյն հոգեւորականներու միջեւ:

Ընդհարումը սկսուեցաւ, երբ հայ հոգեւորականները թոյլ չտուին յոյն միաբանին մտնել գերեզման հայկական թափօրի ժամանակ: Իսրայէլեան ոստիկանութիւնը միջամտեց ընդհարման մասնակիցներուն բաժանելու համար: Ընդհարման պատճառով ոստիկանութիւնը ձերբակալեց հայ սարկաւազ մը, որը յաջորդ օրը ազատ արձակուեցաւ՝ դատավարութեան ընթացքին անմեղ ճանաչուելէն վերջ:

Ըստ status quo-ի համաձայնութեան, երբ Հայ, Յոյն եւ Կաթոլիկ Եկեղեցիները Սբ. Յարութեան Տաճարի մէջ մեծահանդէս թափօրներ կ'ունենան, նշուած եկեղեցիներէն որեւէ մէկը իրաւունք չունի միջամտելու միւս եկեղեցու արարողութիւններուն: Այս առումով յոյներու արարքը status quo-ի համաձայնութեան խախտում էր:

Երուսաղեմի մէջ, Սրբոց Յակոբեանց միաբանության հիմնական առաքելութիւնը Սուրբ տեղեաց մէջ Հայ Առաքելական Եկեղեցու դարաւոր եւ պատմական իրաւունքներու պաշպանումն է: Իրենց առաքելութեան կատարման ճանապարհին՝ միաբանութեան անդամները երբեմն ընդհարումները կ'ունենան Սուրբ տեղեաց մէջ իրաւատէր միւս եկեղեցիներու հոգեւորականներու հետ: Կը յուսանք հիմնախնդիրը իր արդար լուծումը կը ստանայ բանակցութիւններու միջոցաւ եւ հետագային հնարավոր կ'ըլլայ խուսափիլ նման տհաճ միջադէպերէն:

ԲԵԹՂԵՂԵՄԻ ՏԱՃԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

2008 թուականի դեկտեմբեր 30-ին՝ երեքշաբթի օրը՝ Բեթղեհեմի Մենդեան տաճարի մէջ տեղի ունեցաւ ամենամեայ ընդհանուր մաքրութիւն: Ըստ status quo-ի համաձայնութեան՝ տաճարի մաքրութիւնը կը կատարեն հայ եւ յոյն հոգեւորականները: Անցեալին մէջ պատահած է, որ տաճարի մէջ որոշ բաժիններու վերաբերեալ եղած անհամաձայնութեան պատճառով՝ ընդհարումներ տեղի ունեցած են հայ եւ յոյն հոգեւորականներու միջեւ: Նման ընդհարում տեղի ունեցաւ նաեւ 2007 թուականի ընդհանուր մաքրութեան ընթացքին:

Հարկ է նշել սակայն, որ 2008 թուականի ընդհանուր մաքրութիւնը անցաւ խաղաղ ու առանց որեւէ միջադէպի, քանի որ պաղեստինեան կառավարութեան միջամտութեամբ Երուսաղեմի հայ եւ յոյն պատրիարքարանները կրցան առժամեայ համաձայնութեան գալ՝ անցեալ տարուայ մաքրութեան ընթացքին ծագած հիմնախնդրի շուրջ: Առժամեայ համաձայնութիւնը իր մէջ կ'ընդգրկէ հայոց եւ յունաց տեսակէտները եւ միջին տարբերակն է՝ հիմնախնդրի վերաբերեալ ներկայացուցած երկու կողմերու պնդումներուն:

ԿՈՐԻՒՆ ԱՔԵՂԱՅ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ